«Ատամի էսթետիկ վերականգնում»

2023 ապրիլի 17-21-ը կրկնողաբար, Երևան քաղաքում, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կանցկացվի «Ատամի էսթետիկ վերականգնում» թեմայով դասընթացը: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ բժիշկ-ստոմատոլոգներ: Մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 13 տեսական և 12 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք զանգահարել 010583101 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ԱՏԱՄԻ ԷՍԹԵՏԻԿ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023 թվականից կրկնողաբար, ք. Երևան («ԱԿՌԱ» ստոմատոլոգիական կենտրոն)

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ

Օր 1		
15:00-17:30	**Դասախոսություն** Ֆրոնտալ ատամների էսթետիկ վերականգնում: Վինիր ուղղակի եղանակով: Էսթետիկ վերականգման համար անհրաժեշտ պայմաններ: Ռաբեռդամ, սպլիտ դամ, հավելյալ մեկուսացման պարագաներ. տեֆլոն, ռետրակցիոն թել, ատամնաթել: Ռաբերդամի կլամպերի ընտրությունը, տեղադրման եղանակները: Ուղիղ եղանակով վինիրների պատրաստման ցուցումները, հակացուցումները	Գագիկ Խաչատրյան/ Հրաչյա Սահակյան
17:30-18:30	Ընդմիջում	
18:30-21:00	**Գործնական աշխատանք**	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
Օր 2		
10:00-12:30	**Դասախոսություն** Ատամի գույնի որոշումը: Կոմպոզիտի ընտրությունը: Սիլիկոնե բանալի: Ատամի հղկումը, մշակումը, ադհեզիվ նախապատրաստումը, վերականգնումը շերտ առ շերտ: Վինիրի մակերեսի հղկումը և փայլեցումը. միկրո և մակրոտեքստուրա: Հնարավոր սխալներ. կանխարգելում և ուղղում	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
12:30-13:30	Ընդմիջում	
13:30-16:00	**Գործնական աշխատանք**	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
Օր 3		
15:00-17:30	**Դասախոսություն**	Գագիկ Խաչատրյան

	Կողմնային ատամների էսթետիկ վերականգնում: Ատամի բիոմեխանիկա: Խոռոչների դասակարգում և վերականգնման ճիշտ տեխնիկայի ընտրությունը: I դաս. դասական մոտեցում (նախապատրաստում, շերտ առ շերտ վերականգնում, հղկում և փայլեցում) I դաս. պարզեցված մոտեցում (bio-copy մեթոդ) II դաս. դասական մոտեցում (նախապատրաստում, մատրիցա, սեպիկի ընտրություն, մատրիցաբռնիչ, հավելյալ մեկուսացում, ադհեզիվ մշակում, շերտ առ շերտ վերականգնում, հղկում, փայլեցում) II դաս. վերականգնում ատամի էմալային կատարի պահպանմամբ (թունելի տեխնիկա) Կոնտակտային մակերեսի ճիշտ վերականգնում. նրբությունները, օգտագործվող գործիքները	Հրաչյա Սահակյան
17:30-18:30	Ընդմիջում	
18:30-21:00	**Գործնական աշխատանք**	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
Օր 4		
10:00-12:30	**Դասախոսություն** Բացակա ատամի վերականգնում կոմպոզիտի և ապակեթելերի կիրառմամբ (ադգեզիվ կամուրջ): Ցուցումներ, հակացուցումներ, դրական և բացասական կողմեր: Գլխավոր կառուցվածքային տարրերը. հենակետային ատամներ, կրող բալկա (տեսակները. ապակեթելային, պոլիէթիլենթելային), բացակա ատամ: Հենակետային ատամների մշակման ձևը և չափերը տարբեր ատամների դեպքում: Ապակեթելային բալկայի ընտրությունը և տեղադրման նրբությունները: Բացակա ատամի շերտ առ շերտ վերականգնումը և ճիշտ լնդային մակերեսի ձևավորումը: Վերջնական մշակում, հղկում, փայլեցում	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
12:30-13:30	Ընդմիջում	
13:30-16:00	**Գործնական աշխատանք**	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
Օր 5		
15:00-17:30	**Դասախոսություն** Ատամների շինավորում ապակեթելերի կիրառմամբ: Ցուցումները. օրթոդոնտիկ, պարոդոնտոլոգիական, վիրաբուժական: Տեխնիկան, օգտագործվող գործիքները, նյութերը: Ատամների նախապատրաստումը: Շինավորված ատամների հետագա խնամքի առանձնահատկությունները	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան
17:30-18:30	Ընդմիջում	
18:30-21:00	**Գործնական աշխատանք**	Գագիկ Խաչատրյան Հրաչյա Սահակյան

Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի:

*Դասախոսության յուրաքանչյուր թեմայի համապատասխան, մասնակիցների կողմից, դասախոսի հսկողությամբ կատարվում է գործնական աշխատանք պացիենտի կամ ֆանտոմային մոդելի վրա: